HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Երևան Ագաթանգեղոս 6 հասցեի գույքի սեփականատեր

Էկո Պետրոլ ՍՊԸ տնօրեն Զարինե Ստեփանյանից

Ի պատասխան Ձեր գրության պատասխանում եմ ստորև հարցերին

հարց 1. Մարզադաշտի փոխարեն նախատեսվում է կառուցել բնակելի էկո թաղամաս, որն իր մեջ ներառելու է մարզային կոմպլեքս էկո համալիր:

հարց 2. Անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառվելու են ըստ նախագծային աշխատանքների՝ բանկային, վարկային և անձնական միջոցներով: Ներդրման ծավալը գտնվում է քննարկման փուլում, ավարտվելուն պես լրացուցիչ կտեղեկացնենք:

հարց 3. Այո, մարզադաշտի տարածքը նույնպես կառուցապատվելու է նոր չափորոշիչներով, որը համաձայնեցվելու է «Հայաստան» մարզական ՀԿ-ի խորհրդի հետ:

հարց 4. Այո, միանշանակ: Մեր ընկերությունը և «Հայաստան» մարզական ՀԿ-ն ունի համաձայնագիր, որ այդ տարածքում մենք կառուցելու ենք ժամանակակից մարզային համալիրներ տարբեր սպորտաձևերի համար: Լինելու են բոլոր այն մարզադահլիճները, որոնք կան հիմա , բայց շատ ավելի բարձր մակարդակի և այսօրվա չափորոշիչներին համապատասխան: